



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ _ _թիվ 6

«27» Փետրվարի 2014թ.

Գ. Ակնաշեն

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ և ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի բնակիչ Անահիտ Կարապետի Հովհաննիսյան (ծնված 28.10.1958թ.) դիմել է Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի Բարեկամության փողոց թիվ 59 հասցեում գտնվող, իրեն պատկանող օրինական 0.16 հա հողամասի վրա 1961 թվականին կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ. հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, դեկլարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի Բարեկամության փողոց թիվ 59 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Անահիտ Կարապետի Հովհաննիսյանի (ծնված 28.10.1958թ .) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.16 հա հողամասի վրա 1961 թվականին կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ:

Բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են << ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում; Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք- շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորման ստացած անձի կողմից:
3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Անահիտ Կարապետի Հովհաննիսյանի (ծնված 28.10.1958թ .) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
4. 026-008 ծածկագրին տալ Բարեկամության փողոց թիվ 59 հասցե:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գյուղապետ՝

Մ. Միսակյան